Այլ մերկանդամ հողանին թագուն ընդերքըն կենսակալ.
Որ և 'ի մահ վիրաւոր բայց դեռ ըղձայր վարէ սայթաք
Ու 'ի դողդոջուն համէ կոտոլ ըղվերելեակն 'ի վտանգաց ։

## ՀԸ

Պարտեալ ցուլ շընչասպառ 'ի ճապաղիս թաթաւ արեանց
Ի վերջին հուր կատաղութեան զոտս հաստատէ յասպարիզին,
Խոց վիրաւոր, տեգք կողամուխ, կուտին բեկորք շուրջ գեղարդանց.
Ընդ ապիկար ախոյեանք գազանական 'ի հանդիսին ։
Յայն 'ի պահ ցըլամարտիկք յաջ ըղձուլաւ ու ահեակ խաղան
Կարմիր ճօճէն պատմուճանս ըշտապ 'ի շեշտ կըշռեն սուսեր.
Հոգեդարձ գազանն յետին ախոյենից մարտ փութայ.
Մին զայրոյթ. աջող անդ ձեռք ձըգէ զհանդերձըն մահաբեր.
Մոլեգին ըզքօղին աչք — և յաւազին տարուբերի ։

## ՀԹ

Ընդ ուր ըստուար խիր պարանոց ընդ ողնուղարըն գայ 'ի կից՝
Երիանախանձ վարսեալ երկաթ թափ անցանէ շեշտակի.
Նա զկայ առնու — քըստմնին անդամք — բայց աննահանջ դեռ փըքալից՝
Տակաւ ընկճեալ և անկանի, յաղթող 'ի ձայն աղաղակի,
Այլ ոչ մի համե հեծիւն անխռով ըզշունչ տըւեալ վերջին ։
Պաճուճազարդ հասանեն կառք — կուտեն ըզդին անդ անկենդան —
Տեսիլ ախորժական վայրագ աչաց բազմամբոխին —
Ընդ սանձամերժ ճախրասլաց քառեակ նըժոյգք ընտրական
Զանարին ձըգեն ըզբեռն արշաւասոյր 'ի գարշապար ։

## Ձ

Այս ըզբօսանք դըժընդակ տան ընծայեն յաճախ հրաւէր
Իսպանուհւոյ օրիորդին, և զպատանւոյն բերկրեն զոգիս.
Մոլորեալ վաղ քաջ յարիւն զըւարճանայ սիրտն աննըւէր
Ի վրէժ քինու զընկերին դիտեալ ախորժ վշտաց կարիս ։

Խ. Գ.

---

## ԿԵՆԱՑ ԲԱՆ

Ու ծաղկագեղ վարդենի՝
Մեղմըն խօսէր տապանի.
" Ինչ՞ պատճառ և օրէն
Աճել 'ի վայրքս իմ աստէն.
Ծածկել զարձանս ոսկետառ,
Զիմ ըղմիակ մըխիթար " ։

Ծաղիկն ասէր. " Ի գըրոց
Կոչեաց զիս կար Տեառն և զութ.
Քան մահագուժ ըզքո տառ
Կալ յիշատակ աստ պայծառ.
Այլ ես ծաղկեմ սփոփական
Աստուածային կենաց բան " ։

ՄԱՆ. ՑՐԼԼԻԽ